

ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկատեսակի անվանումը	<<ՀԻՓՈԹԵՔ-ԳՆՈՒՄ>> /հողամասի/
Վարկի նպատակը	հողամասի գնում
Պայմանները սահմանող մարմինը, որոշումը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Խորհրդի <<11>><<ղեկտեմբերի>>2023թ-ի թիվ 17 որոշում
Պայմանների գործողության ժամկետը	Սկսած <<18>><<ղեկտեմբերի>>2023թ-ից
Վարկի ձևակերպման վայրը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի տրամադրման ձևը	Անկանխիկ (միանվագ կամ փուլային)
Վարկի նվազագույն գումարը	3.000.000 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումարը	40.000.000 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն ժամկետը	12 տարի

Վարկի տարեկան անվանական, փաստացի տոկոսադրույքները և ծառայության միանվագ վճարը

Վարկի գումար /ՀՀ դրամ/	Տարեկան նվազագույն անվանական տոկոսադրույք	Վարկի տրամադրման ծառայության մեկանգամյա վճար /% տրվող վարկի գումարից/	Տարեկան փաստացի տոկոսադրույք
3.000.00 - 40.000.000	14,7	0,7	15,92

Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակը	Վարկի մարման եղանակ – ամենամսյա (հավասարաչափ կամ ոչ հավասարաչափ) Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա
Վարկի մարման դադարի շրջանը	կարող է սահմանվել վարկի մայր գումարի դադարի շրջան, ոչ ավել, քան տրամադրվող վարկի ընդհանուր ժամկետի 1/5-ը
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով
Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը	Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ՝ հաստատուն
Ժամկետանց վարկի տոկոսադրույքը	տարեկան 24%
Ժամկետանց տոկոսագումարի տույժը	օրական 0,13%
Պարտքի գանձման հերթականությունը	Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար
Վարկի վաղաժամկետ մարումը	Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, տույժեր ու տուգանքներ չեն սահմանվում:

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկի ապահովման միջոցները	Գրավ՝ բնակելի և ոչ բնակելի նշանակության անշարժ գույք /անշարժ գույքի գնման կամ կառուցման իրավունք/, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան. - Գլխամասային գրասենյակի համար՝ ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույք, - մասնաճյուղերի համար՝ Երևանում, Երևանամերձ տարածքներում և վարկ տրամադրող մասնաճյուղի տեղակայման տարածաշրջանում գտնվող շենք-շինություններ, հողամասեր Գրավի առարկա կարող է հանդիսանալ ինչպես վարկի գումարով գնվող հողամասը, այնպես էլ այլ անշարժ ու շարժական գույք:
Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցությունը ըստ գրավ դրվող գույքի տեսակների	հողամասեր - 70% առևտրային, արտադրական, հասարակական նշանակության շենք-շինություններ - 75% բնակելի նշանակության շենք-շինություններ - 80%

Կանխավճարի նվազագույն չափ	30%: Կանխավճար կարող է չպահանջվել կամ պահանջվել ավելի քիչ՝ լրացուցիչ գույք գրավադրելու դեպքում:
Գրավադրման հետ կապված ծախսերը	Գրավ դրվող գույքը ենթակա է գնահատման, իսկ գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաճախորդի տարիքային սահմանափակումները	Վարկառուի նվազագույն տարիք - 22 տարեկան Վարկառուի, Գրավատուի առավելագույն տարիք /վարկի մարման վերջնաժամկետի դրությամբ/ - 68 տարեկան
Երաշխավորի պահանջը	Վարկային հայտի առանձնահատկություններից ելնելով, որոշ դեպքերում կարող են պահանջվել երաշխավորներ
Ապահովագրության պահանջը	Չի պահանջվում